# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773*


**№ ԴԴ -3-** Ն-5584

**«16» հուլիսի 2021թ.**

**«ՆԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ**

Սույնով տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝ «ՆԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ (Հավելված 1)-ում ՍՊԸ-ի անվանումը չի լրացրել ռուսերեն լեզվով, միաժամանակ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը «ՆԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունը՝ *փաթույթով (ռուլոն), երկշերտ կամ եռաշերտ, 9,4սմX12,5սմ (+/-2%) չափի թերթիկներ.* **(ըստ գնման հայտով սահմանված տեխնիկական բնութագրի՝ Փաթույթով (ռուլոն), երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ (+/-2%) չափի թերթիկներ)**:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ առաջարկվում է Ձեզ մինչև սույն թվականի հուլիսի 19-ը ներառյալ շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ**
**ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝**

**ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/11 ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-788, 511-792